

12.08.2016թ.

ժ.10: 00

*Մասնակցում էին՝ Գ.Անանյան, Գ.Գևորգյան, Ս.Դավթյան, Յու. Պողոսյան, Լ.Պետրոսյան (խորհրդի անդամներ), Հ. Գրիգորյան (խորհրդի քարտուղար)*

*Հրավիրված էին՝ Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Ա. Ավագյան (գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ), Գ.Մարտիրոսովա (տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ), Մ. Պետրոսյան (շինարարության վիճակագրության բաժնի պետ), Ամրոյան (գյուղատնտեսության համաարարած հաշվառման վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների և ծրագրավորման բաժնի պետի տեղակալ), Ռ. Վարդանյան (գյուղատնտեսության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ), Ռ. Շարոյան (որակի կառավարման բաժնի պետ), Ա. Ամիրխանյան (որակի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ), Ա.Գրքոյան (որակի կառավարման բաժնի առաջին կարգի մասնագետ):*

### **Օրակարգի նախագծում երեք հարց.**

1. 2014թ. Հայաստանի Հանրապետությունում իրականացված գյուղատնտեսական համատարած հաշվառման (ՀՀ ԳՀՀ) արդյունքների հրապարակման համար կազմված ելքային աղյուսակների (համաձայն ներկայացվող ձևաչափերի) ձևերին հավանություն տալու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Ավագյան/*

2. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

2.1. Հաղորդում ԱՄՆ Նյու Յորք քաղաքում 2016 թվականի հունիսի 28-ից հունիսի 30-ը ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի կողմից կազմակերպված՝ «Ժամանակի օգտագործման վիճակագրության համար գործունեության միջազգային դասակարգչի (ICATUS) վերանայման» և այն ավարտին հասցնելու նպատակով փորձագիտական խմբի հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Գ.Մարտիրոսովա/*

2.2. Հաղորդում Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2016 թվականի հուլիսի 11-ից հուլիսի 13-ը «Աղքատության գնահատում Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրներում» և «Աղքատության չափում» խորագրով սեմինարներին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Գ.Մարտիրոսովա, Ա. Ամրոյան /*

2.3. Հաղորդում Լեհաստանի Կրակով քաղաքում 2016 թվականի հուլիսի 13-ից 16-ը Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների համար բիզնես վիճակագրության վերաբերյալ աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Մ. Պետրոսյան, Ռ. Վարդանյան/*

2.4. Հաղորդում Վրաստանի Թբիլիսի քաղաքում 2016 թվականի հուլիսի 19-ից 21-ը «Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) կողմից կազմակերպված Որակի կառավարում և հետազոտության որակի չափում խորագրով խորացված դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Ռ. Շարոյան, Ա. Ամիրխանյան, Ա. Գրքոյան/*

### **3. Այլ հարցեր**

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

*/Բ.Վեարկության արդյունքները-կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

### **Լսեցին՝**

1. 2014թ. Հայաստանի Հանրապետությունում իրականացված գյուղատնտեսական համատարած հաշվառման (ՀՀ ԳՀՀ) արդյունքների հրապարակման համար կազմված ելքային աղյուսակների (համաձայն ներկայացվող ձևաչափերի) ձևերին հավանություն տալու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Ավագյան/*

### **Որոշեցին՝**

հավանություն տալ 2014 թվականի Հայաստանի Հանրապետությունում իրականացված գյուղատնտեսական համատարած հաշվառման արդյունքների հրապարակման համար կազմված ելքային աղյուսակների ձևերին:

*/Անհատական/*

*/Բ.Վեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

## **Լսեցին՝**

2. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

2.1. Հաղորդում ԱՄՆ Նյու Յորք քաղաքում 2016 թվականի հունիսի 28-ից հունիսի 30-ը ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի կողմից կազմակերպված՝ «Ժամանակի օգտագործման վիճակագրության համար գործունեության միջազգային դասակարգչի (ICATUS) վերանայման» և այն ավարտին հասցնելու նպատակով փորձագիտական խմբի հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/*

2.2. Հաղորդում Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2016 թվականի հուլիսի 11-ից հուլիսի 13-ը «Աղքատության գնահատում Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրներում» և «Աղքատության չափում» խորագրով սեմինարներին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Դ.Մարտիրոսովա, Ա. Ամրոյան /*

2.3. Հաղորդում Լեհաստանի Կրակով քաղաքում 2016 թվականի հուլիսի 13-ից 16-ը Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների համար բիզնես վիճակագրության վերաբերյալ աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Մ. Պերրոսյան, Ռ. Վարդանյան/*

2.4. Հաղորդում Վրաստանի Թբիլիսի քաղաքում 2016 թվականի հուլիսի 19-ից 21-ը «Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) կողմից կազմակերպված Որակի կառավարում և հետազոտության որակի չափում խորագրով խորացված դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Ռ. Շաքոյան, Ա. Ամիրխանյան, Ա. Գրքոյան/*

## **Որոշեցին՝**

արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ